

Երէկ ուշ գիշերին յայտարարուեցաւ, որ Վրաստանի նախագահ Էտուարտ Շեւարտնաձէի եւ ընդդիմութեան երեք ներկայացուցիչներուն միջեւ «բանակցութիւնները ձախողած են: Մանրամասնութիւնները կարողալ սոյն էջով լրատուութեան մէջ - Ա.-):

Հանդիպումին աւարտին, Սահակաշվիլի յայտարարեց, որ պայքարը պիտի շարունակուի, մինչեւ որ Շեւարտնաձէ եւ անոր իշխանութիւնը հրաժարին:

(ԱՅՓ)

## ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ՊԵՏԵՐԸ ԽՍՏԻԿ ԿՐ ԴԱՏԱՊԱՐՏԵՆ ՍԵՆՏՏԱԿԱՆ ԱՐԱՐԻՈՅ ՄԵՋ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԱԾ ԱՅԱՐԵԿՉԱԿԱՆ ԱՐԱՐՔԸ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երէկ խստիւ քննադատեց մայրաքաղաք Ռիատի Մուհայյա բնակարանային համալիրին մէջ տեղի ունեցած պայթումները եւ անմիջապէս թելադրեց անհրաժեշտ օժանդակութիւն կատարել Սէնտտական Արաբիոյ մէջ Լիբանանի դեսպանատան՝ գուրգուրալու լիբանանցի քաղաքացիներուն:

Նախագահ Լահուտ ընդգծեց, որ Լիբանան միշտ ալ դատապարտած է ահաբեկչութիւնը եւ նման պարագայի չի կրնար տարբեր կարծիք ունենալ: Լիբանանի դրացի ալլ երկիրներ, ինչպէս Սէնտտական Արաբիան, որ կը պաշտպանէ արաբական եւ իսլամական աշխարհին իրաւունքները:

Նախագահ լահուտ ցուակցութիւն յայտնեց Սէնտտական Արաբիոյ Տահտ պըն Ապտէլ Ալիյ թագաւորին, սէնտտի պետական եւ բարձրաստիճան պաշտօնատարներուն, սէնտտի ժողովուրդին եւ պոհերուն հարապատնէրուն:

### ՀԱՐԻՐԻ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Սէնտտական Արաբիոյ գահաժառանգ իշխան Ապտալլա Պըն Ապտէլալիյի հետ: Ան դատապարտեց երէկ առաւօտեան կանուխ ժամերուն մայրաքաղաք Ռիատի Մուհայյա բնակարանային համալիրին մէջ տեղի ունեցած պայթումները եւ ցուակցութիւն յայտնեց պայթումներուն պատճառած բոլոր պոհերուն եւ վիրաւորներուն համար:

Վարչապետ Հարիրի թելադրեց Ռիատի մէջ Լիբանանի դեսպանատան՝ ամենայն հոգածութեամբ խնամել լիբանանցի վիրաւորները:

խստիւ դատապարտելով պայթումները, վարչապետ Հարիրի ըսաւ, որ նման ահաբեկչական արարքներ, որոնք թիրախ կը դարձնեն անմեղ քաղաքացիներ, չեն կրնար իրաւ իսլամներու կողմէ կազմակերպուած եւ գործադրուած ըլլալ, որովհետեւ իսլամութիւնը մեղք կը նկատէ քաղաքացիներու սպանութիւնը:

Հարիրի ընդգծեց, որ նման արարքներ անմարդկային են եւ կը հակադրուին բոլոր կրօններուն սկզբունքներուն:

### ՊԵՐՐԻ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի իր կարգին խստիւ դատապարտեց Ռիատի գործողութիւնը, զայն նկատելով անընդունելի բոլոր պարագաներուն հաւասարակէս:

### ՕՊԷՅՏ ՏԵՍԱԿՑԵՑԱՄ ԸՆԴԵՅԻ ԳԵՏ

## ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՅԱՏՈՒԿ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ ՄԸ ՄԵԿՆԵՑԱԻ ՌԻԱՏ

Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտ երէկ խստիւ դատապարտեց Ռիատի պայթումները եւ նախարարութեան կեդրոնատեղիին մէջ յատուկ սեփեակ մը յատկացուց: Էտուարտնաձէի համար դէպքին վարձագումներուն: Այս աշխատանքներուն հսկեց դեսպանատան ընդհանուր քարտուղար Նաժի Ալի Ասի:

Շար.՝ էջ 2

## ԻՍՐԱԵԼԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՀՐԶՊԱԼԼԱՅԻ ՀԵՏ ԳԵՐԻՆԵՐՈՒ ՓՈՒՍՆԱԿՈՒՄԻՆ

Իսրայէլի կառավարութիւնը երէկ համաձայն գտնուեցաւ Հրկայալայի հետ գերիններու փոխանակման:

Բանակցութիւններուն համաձայն, շուրջ 400 լիբանանցի եւ պաղեստինցի գերիններ ապտ պիտի աքաղակուին իսրայէլեան բանտերէն, մինչ Հրկայալայ ապտ պիտի արձատկէ իսրայէլացի ֆէրի նախկին Կոր. Հանան Թէնէնպաուսը եւ պիտի յանձնէ իսրայէլացի 3 վիրաւորներու դիակները:

Իսրայէլեան պատկերասփիռի եւ ձայնասփիռի կայանները հաղորդեցին, որ իսրայէլեան կառավարութիւնը երէկուան իր նիստին գերիններու փոխանակման շուրջ քուէարկած է 12 թեր եւ 11 դէմ պատկերով: Վարչապետ Արիէլ Շարոն նաեւ թեր քուէարկած է:

## ՍԵՆՏՏԱԿԱՆ ԱՐԱՐԻՈՅ ՄԵՋ ԱՆՁՆԱՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՆ ՍԸ ԽԼԵՑ ԱՌՆՈՒԱԶՆ 17 ՁՈՒ ԵՒ ԱԲԵԼԻ ԲԱՆ 120 ՎԻՐԱՒՈՐ

Սէնտտական Արաբիա դարձաւ ահաբեկչական մահացու արարքի մը թիրախ դարձաւ շաբաթով երջին, երբ առնուազն 17 պոհ եւ անէլի քան 120 վիրաւոր, արձանացրուեցան անձնասպանական գործողութեան մը ինքնաշարժի մը վրայ:

Սէնտտական Արաբիոյ մէջ Լիբանանի դեսպան Ահմէտ Շամմաթ անդրադառնալով Ռիատի գործողութեան տեղեկացուց, որ պայթումները պատճառած են 4 լիբանանցի պոհեր, ինչպէս նաեւ 28 վիրաւորներ եւ 3 կորսուածներ:

Արաբիոյ մէջ իրենց դիւանագիտական կեդրոնները՝ ապահովութեան կացութիւնը վերատեսուելու են թարկելով նպատակով, զգուշացնելով հաւանական յարձակումներէն:

## ԼԻԲԱՆԱՆՑԻ 4 ՁՈՒ, 28 ՎԻՐԱՒՈՐ, 3 ԿՈՐՍՈՒԱԾ

Սէնտտական Արաբիոյ մէջ Լիբանանի դեսպան Ահմէտ Շամմաթ անդրադառնալով Ռիատի գործողութեան տեղեկացուց, որ պայթումները պատճառած են 4 լիբանանցի պոհեր, ինչպէս նաեւ 28 վիրաւորներ եւ 3 կորսուածներ:

Շամմաթ ըսաւ, որ վիրաւորներուն մեծ մասը կը գտնուի հիւանդանոցներուն մէջ ակտիւ, սակայն, որ շատեր արդէն իսկ վերադարձած են իրենց կեցութեան վայրերը:

Պաշտօնատարներ յայտնած են, թէ գործողութեան համար օգտուած են իրենց կեցութեան վայրերը:

## ՇԵՎԱՐՏՆԱԾԷ - ԸՆԴԴԻՍԱԳԻՐ ԵՄԱՍ

### «ԲԱՆԱԿՑՈՒԹԻՆՆԵՐ»

## ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՑՈՒԹԻՆԸ ՀԱՎԱԿՇԻՈՒԷ ԴՈՒՐՍ Է

ԿՐ ՅԱՅՏԱՐԱՐԷ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ

Վրաստանի նախագահ Էտուարտ Շեւարտնաձէ երէկ երեկոյեան ուղղուեցաւ խորհրդարանի շէնք՝ բանակցութիւններ վարելու ընդդիմադիր ղեկավարներու հետ, տրուած ըլլալով որ անցեալ շաբաթվերջին կայացած խորհրդարանական ընտրութիւններէն ետք ծայր տուած բողոքի ալիքին հետեւանքով երկրին ներքին կացութիւնը հակակշռելի ըլլալէ կը դադրի հետպետէ, ինչպէս երէկ յայտարարեց Վրաստանի պաշտպանութեան նախարարը:

Շուրջ 5000 ցուցարարներ, ղեկավարուեցաւ շաբաթվերջին կայացած խորհրդարանական ընտրութիւններու արդիւնքէն, «հաստատուած են» Թիֆլիսի մէջ խորհրդարանի շէնքին մօտ եւ կը մերժեն հեռանալ հոնկէ, պնդելով, որ ընտրութիւնները ընթացած էին մեծածաւալ խախտումներով: Անոնք կը պահանջեն Շեւարտնաձէի հրաժարականը:

Վրաստանի պաշտպանութեան նախարար Դաւիթ Թելապտեժ պետական պատկերասփիռով շար.՝ էջ 2



ղաք Ռիատի արեւմուտք գտնուող Ուատ Լապանի շրջանին Մուհայյա բնակարանային համալիրին մէջ, որ ըստ անոր պատահական տուի տուող բնակարանային երեք համալիրներու մէջ: Անոնք 35 պոհ խլած էին:

«Ասիկա կը հաստատէ, թէ ակնահարումները կատարողները «Քալիտա» ցանցին կը պատկանին», ըսած է պաշտօնական աղբիւրը:

«Ասիկա կը հաստատէ, թէ ակնահարումները կատարողները «Քալիտա» ցանցին կը պատկանին», ըսած է պաշտօնական աղբիւրը:

Անձնասպանական գործողութիւնը, որ կատարուած է ինքնաշարժի մը պայթումով, տեղի ունեցած է Շաբաթ կէս գիշերին, երբ քաղաքի ընտանիքներ արթուն էին՝ Ռիատի քաղաքի միջին աստիճանի առիթով, արեւածագէն արեւմուտ ծննդատանութեան առջ:

Ան ըսած է, որ շրջանին մէջ ապահովութեան կը հսկէին Սէնտտական Արաբիոյ Պահակաւորները շուրջ 30 անդամներ:

Շուրջ 35 հազար ամերիկացի կ'ապրի Ս. Արաբիոյ մէջ: Բրիտանիա, Քանադա եւ Աւստրալիա թելադրած են իրենց քաղաքացիներուն, որ յետագային չ'ենթարկուին կանաչ կարգի Ս. Արաբիոյ մէջ:

Ըստ ապահովութեան աղբիւրներու, պայթուցիկ նիւթերով լեցուած ինքնաշարժը լեցողութեան մտնելու համալիրէն ներս ու հոն պայթելով:

Պայթումը, որ մինչեւ Ռիատի կեդրոնը շէնքեր ցնցած է, «ահաբեկչական ակնահարում մըն է», ըսած է Ս. Արաբիոյ

Արեւմտեան ՉՊՈՒՇԱՑՈՒՄ Վայրագութիւնը տեղի ունեցած է այն օրը, երբ Ս. Նահանգներ փակած էին Ս.

## ԱԿՆԱՐԿ

## ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԻՉԱԿԵՏ

Նոյեմբերի առաջին շաբաթը լիբանանահայութեան համար յատկանշուեցաւ հայապատկան Ջուախքի ծանօթացման ձեռնարկներու շարքով: Արդարեւ, Հ. Յ. Դ. Հայ Դատի Լիբանանի Մարմինին կազմակերպած ժողովրդային թէ աշակերտական հաւաքներով, ինչպէս նաեւ յուսարակական ձեռնարկներով պատմական եւ ներկայ Ջուախքը իր պատմութեամբ, աշխարհագրութեամբ շրջանային քաղաքական շրջագիծին մէջ իր այսօրուան դրութեամբ յուսարակական քերական կազմակերպչներուն եւ յատկապէս այս առիթով Լիբանանի հրաւիրուած Ջուախքի եւ ջուախքահայութեան դիմագրուած խնդիրներուն փորձագէտ ընկ. Հայկապուս Ալլոցեանի կողմէ:

Ջուախքի թեման սակայն, առաջին անգամը չէր, որ կ'արժարձուէր այս գաղութին մէջ: Հ. Յ. Դ. Լիբանանի Երիտասարդական Միութիւնը շրջանային սեմինարի կազմակերպումով երկու տարի առաջ դարձաւ հրաւիրելով այս հարցերուն հնուտ մասնագէտներ Երիտասարդական մակարդակի վրայ յաջողած էր ծանօթացնել Ջուախքի եւ ջուախքահայութեան իրաւունքներու խնդիրը իր շարքերուն:

«Այդպէս» իր կարգին խմբագիր գործուղելով շրջան համապարփակ տեղեկութիւններ ձեռք ձգած էր հայապատկան այս տարածքին եւ հոն ապրող մեր հայրենակիցներուն հասարակական կեանքին մասին եւ ձեռնարկած՝ այս իմաստով յատուկ հատորի հրատարակութեան:

Այժմ, այս հանգրուանին, իրագործուած ձեռնարկներու մասով ժողովրդային, երիտասարդական, ուսանողական եւ աշակերտական խաւերը եւս կը ներառուէին ջուախքահայութեան այսօրուան իրավիճակը պարզող համընդհանուր աշխատանքին:

Ջուախքեան օրերու կայացումը պոզադիպեցաւ Վրաստանի խորհրդարանական ընտրութիւնները այդ մասին կը յօսին ներքաղաքական քառս մը մասին իրադարձութիւններու հանգրուանային աւարտին առնչութեամբ մեծ հարցականներ ստեղծելով: Երկրին ամբողջական տարածքին վրայ վերահսկողութիւն չ'ունեցող իշխանութիւններն ու ներհասարակական անկառավարելի մթնոլորտը մտածել կու տան երկրի հետագայ կառավարվածութեան եւ ապագային փոքրամասնութիւններուն եւ իրողայէս ինքնավար շրջաններուն վերապահուած կարգավիճակներուն մասին:

Փորձագիտական մակարդակով լիբանանահայութեան ներկայացուած վեկուցը ահապազը ինչչեցող հայկական Ջուախքի հայաթափման ընթացքը կանխարգիլելու եւ զայն ամէն գնով միատարր ու հայեցի դիմագիծով պահպանելու անյետագայի անհրաժեշտութեան:

Համահայկական տարողութիւն ունեցող հիմնախնդիրներու նկատմամբ յանձնառութիւն վերցուցած մեր գաղութը չի կրնար անտարբեր մնալ ապագային-քաղաքական այս մարտահրաւերին դիմաց եւս: Մասնաւոր հիմա, որ բաւականաչափ ծանօթութիւն ունեցաւ հայկական այս տարածքին եւ հոն ապրող մեր հայրենակիցներուն մասին:

Շար.՝ էջ 3

ՀԱՐԻՐԻ ԷՆՏ ՏԵՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՒԱՐՏԻՆ

### ԺՈՄՊԼԱԹ ԴԱՏԱՊԱՐՏԵՑ ԱՒԱՏԻ ՊԱՅԹՈՒՄՆԵՐԸ



Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկվ Քորալթե-մի մէջ ընդունեց Ընկերվար Յառաջդիմական Կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ուալիտ Ժոնալիսը, որուն հետ քննարկեց ներկայիս անկախ հարցեր եւ շրջանային իրադարձութիւններ:

Հանդիպումին ետք Ժոնալիսը խստի դատապարտեց Ռիատի բնակարանային համալիրին մէջ տեղի ունեցած պայթուումները եւ պանոսք նկատեց անընդունելի:

## ՌԻԱՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ ՊԱՐԶԱՊԵՍ ԿԸ ՎՆԱՍԷ ԻՍԼԱՄՈՒԹԵԱՆ

Կ'ԸՍԷ ՆԱԽԱՐԱՐ ՄԻՔԱԹԻ

Հանրագուտ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար Նեժիպ Միքաթի երկվ խստի դատապարտեց Ռիատի մէջ տեղի ունեցած պայթուումները, նկատել տալով, որ նման ոճիրներ ոչ մէկ կապ ունին կրօններու հետ:

Միքաթի դիտել տուաւ, որ նշեալ գործողութիւններու ետին թաքնուած են յստակ կողմեր, որոնք կ'ունենան վնաս հասցնել իսլամութեան:

Միքաթի դիտել տուաւ, որ նշեալ գործողութիւններու ետին թաքնուած են յստակ կողմեր, որոնք կ'ունենան վնաս հասցնել իսլամութեան:

### ՎՐԱՍԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ...

Շարունակուած Ա. Էջէն

Նէն յայտարարեց, թէ ղեկավարը ղրական ձեռով չէն ընթանար եւ կացութիւնը հակակշիռէ դուրս է: Ան դիտել տուած է, թէ ղեկավարը վարգազման հետագայ հողովորթը յստակ չէ, սակայն բանակը պիտի շարունակէ կատարել իր պարտականութիւնը:

Շեւարտնաժէ բանակցութեան պիտի նստի ընդդիմադիր ղեկավարներ Միխայիլ Սահակաշվիլիի, Չուրպա ժվանիայի եւ խորհրդարանի նախագահ Նինո Պուրաձաձեի հետ: Հանդիպումը պիտի կայանար երէկ առաւօտեան, սա-

կայն յետաձգուեցաւ երեկոյեան, որովհետեւ նշեալ ետեակը մերձեց հանդիպումը կայացնել նախագահին գրասենեակին մէջ եւ պահանջեց հանդիպման չէկոք վայր մը:

Հակառակ անոր որ բողոքի ալիքը ծայր տուաւ բնորոշութիւններուն յոյսին տակ, որոնք նաեւ միջազգային դէտերու համաձայն ընթացան խախտումներով, այսուհանդերձ բողոքը ձեւափոխուեցաւ Շեւարտնաժէի վարչակարգին դէմ ընդհանուր բողոքի, որ կ'առնչուի կենցաղային վատ պայմաններու եւ վարչական փտածութեան:

### ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՅԱՏՈՒԿ...

Շարունակուած Ա. Էջէն

Միւս կողմէ, Օպէյտ կապեց յանձնախումբ մը, որ երէկ յետմիջօրէին մեկնեցաւ Ռիատ գետնի վրայ հետեւելու յիբանանցիներու կացութեան:

Օպէյտ ցաւակցութիւն յայտնեց արձանագրութեամբ բոլոր զոհերուն ընտանիքներուն եւ վիրաւորներուն: Ան հեռագիր մը յղեց սէնուցի իր պաշտօնակիցին՝ Սէուտ Ֆայսալի, դատապարտելով արձանագրութեան անարեւելակալ արարքը:

Միւս կողմէ, Լիբանան - Սուրիա համագործակցութեան ամրապնդման իմաստով Օպէյտ երէկ սուրիացի իր պաշտօնակիցին՝ Ֆարուք Շարէհի հետ հանդիպումի մը ընթացքին քննարկումի առարկայ դարձուց պայթումին քաղաքական եւ ապահովական վնասներն ու շրջանային իրադարձութիւնները:

Քննարկուեցաւ նաեւ պաղեստինցի գաղթականներու բնակեցման ծրագրին դէմ պայքարելու հեռանկարները եւ անոր անհրաժեշտութիւնը:

### ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԹՈՐՈՍԵԱՆ ՄԵՋՆԱԿԱՐԳՎԱՐԺԱՐԱՆ

Կը ներկայացնէ

#### ԽԵԼԱՑԻ ՄԱՐԴԸ

Երաժշտական կատակերգութիւն

#### ՀԱԼԷՊԻ ՄԵՋ

Շաբաթ, 15 Նոյեմբեր 2003ին, Կրթասիրաց Մշակութային Միութեան 2արեւ Պարիլեան սրահին մէջ: Կեսօրէ առաջ աշակերտական եւ երեկոյեան ժամը 8:30ին Կազմակերպութեամբ Սուրիոյ Հայ Աւետարանական Կրթական Խորհուրդի:

#### ԵՐԵՒԱՆԻ ՄԵՋ

Շաբաթ, 22 Նոյեմբեր 2003ին Կը մասնակցի «ՆԱՍՆ ՀԱՏԻԿ» փառատօնին Կազմակերպութեամբ «Նախաբեմ» Կրթաշակութային Միութեան:

Թատերախումբը Հալէպէն Երեւան կը մեկնի 16 Նոյեմբեր 2003ին:

**ՍՈՒՐԻ ՆԵԱՆ**  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՑ  
ՎԵՐԱՆՈՐԴՄԱՆ  
ՖՈՆՏ

Ազգային մը 500 տողար  
Պրն. Յակոբ Գնաճեան 100,000 Լ.Ո.  
Տէր եւ տիկին Յարութ Գեորգեան 100,000 Լ.Ո.  
Տէր եւ տիկին Խաչիկ Աբրահամեան 30,000 Լ.Ո.  
Պրն. Նշան Վարդիվաճեան 20,000 Լ.Ո.

### ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Ժորժ եւ Սեդա Համամ եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Ռաֆա եւ Ռիթա Քնիս եւ զաւակունք  
Կարպիս Սելբոնեան եւ ընտանիք  
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, քրոջ  
Եւ Հարազատին՝

### ԱԶԱՏՈՒՅԻ ԱՂԱՊԱԼԵԱՆԻ (ՏՃԵԱԿ՝ ՄԵԼՈՆԵԱՆ)

մահը:  
● Ներկայ ընդունիլ իբրեւ մահագոյ:  
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին էլքեֆիէի Ս. Յակոբ Եկեղեցւոյ «Տիրան Պապիկեան» սրահին մէջ, Երկուշաբթի 10 եւ Երեքշաբթի 11 Նոյեմբերի յետմիջօրէի ժամը 16:00էն 20:00:

### ՄԱՀԱԶԴ

Պետրոս Սալորեան եւ զաւակը՝ Սարգիս  
Տէր եւ տիկին Ժորժ Սալորեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Կարո Սալորեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Քրիստափոր Սալորեան եւ զաւակունք  
Մարո եւ Սիլվա Սալորեան  
Տէր եւ տիկին Կարո Սարգիսեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Սարգիս Դաւիթեան եւ զաւակունք  
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, աներոջ, քրոջ եւ Հարազատին՝

### ԱՆԺԷԼ ԱՍԼՈՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 8 Նոյեմբեր 2003ին, յետ երկարատեւ հիւանդութեան:  
Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Շաբաթ 8 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 1:00ին, Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ, ուրկէ Հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրըն Էլ Շըպպէի Ազգային գերեզմանատունը:  
● Ներկայ ընդունիլ իբրեւ մահագոյ:  
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին համագուցեալին բնակարանը, Կիլիկիա թաղ, Շաբաթ 8, Կիրակի 9 եւ Երկուշաբթի 10 Նոյեմբերին:

### ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Յակոբ Խանճեան եւ զաւակունք  
Տիկին Աստղիկ Ապունայեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Պետրոս Պասմանեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Իվան Արսլանեան եւ զաւակունք  
Քէօրճիլեան ընտանիք  
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, գործանչին, կեսերոջ եւ Հարազատին՝

### ԱՐՇԱԼՈՅՍ ԽԱՆՃԵԱՆԻ (ՏՃԵԱԿ՝ ԸԵՕՐՃԻԻԸԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 7 Նոյեմբեր 2003ին, յետ կարճատեւ հիւանդութեան:  
Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Շաբաթ, 8 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Նոր Հաճնոյ Ս. Գեորգ Եկեղեցւոյ մէջ, ուրկէ Հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրըն Շըպպէի Ազգային գերեզմանատունը:  
● Ներկայ ընդունիլ իբրեւ մահագոյ:  
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին Պետրոս Պասմանեանի բնակարանը, Անթիլիաս, «Թաքատոմ» թաղ, «Մուսուատ» շէնք, գետնաշարի, Շաբաթ 8, Կիրակի 9 եւ Երկուշաբթի 10 Նոյեմբերին:

**Le Savoir-Faire en Lumière**

**G. AYANIAN & SONS**

Dora, (01)255222/3/4/5/6  
Gemmayzé, (01)447000-445396  
(03)627728/9  
Fax: (01)265187-582357  
E-Mail: gasons@dm.net.lb  
www.ayanian.com

## ՀԱՐԻՐԻ – ՍԸՄԱՅԱ ԺՈՂՈՎ՝ ԲՈՐԱՅԹԵՄԻ ՄԵՋ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկվ Քորալթե-մի մէջ ընդունեց տեղեկատուութեան նախարար Միշէլ Սըմահան, որուն հետ քննարկեց վերջինին կողմէ կառավարութեան ժողովին արդիւնքները յայտարարելու մերժումին պատճառները:

Հանդիպումին կատարուած խորհրդակցութիւններէն ետք որոշուեցաւ, որ վարչապետ Հարիրի կառավարութեան յառաջիկայ նիստին ընթացքին քննարկումի առարկայ պիտի դարձնէ նախարարներու կողմէ տեղեկութիւններու սպրդումին հարցը:

### ԻՍՐԱԵԼԵԱՆ ԲՈՆԱՐԱՐՔՆԵՐ ՇԵՊԱԱՅԻ ԴԷՍ

Իսրայէլեան օդուժը երէկ յետմիջօրէի ժամը 3:30ին թռիչքներ կատարեց Մապարէի Շըպաա-լի վերել:

Իսրայէլեան ուժեր նաեւ ռատարի իրենց դիրքէն կրակ բացին Շըպաա-լի ուղղութեամբ: Երեսփոխան Քասէմ Հաշէմ դատապարտեց իսրայէլեան այս բռնարարքները, նկատել տալով, որ փաստօրէն կարիքը կայ անոր պահելու դիմադրութեան վէտը:

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿ**

(Գործակցութեամբ եւ հովանաւորութեամբ Երեւանի Պետական Համալսարանի)

Համագործակցութեամբ՝ Ազգ. Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդին

### ՀԱՅՈՑ ԼԵՉՈՒԻ ԽՏԱՅԵԱԼ ԴԱՍԸՆԹԱՅՔ

Հայերէնի բարելաման անվճար ձեռնարկ՝ պատահմներու, երիտասարդներու, մայրենիով դասաւանդող ուսուցիչներու եւ հայկական հաստատութիւններու պաշտօնեաներուն համար

90 ժամեայ դասաւանդութիւն՝ 4 Նոյեմբեր 2003 - 13 Յունիս 2004

Դասաւանդութեան օրեր՝ ամէն Երեքշաբթի եւ Հինգշաբթի, երեկոյեան ժամը 5:00 - 6:30, Մ. եւ Հ. Արսլանեան ճեմարան, Մըզիթ:

Դասընթացքի աւարտին՝ համապատասխան վկայագիր

Մանրամասնութեանց համար հեռաձայնել 04 - 712603, 04 - 712604, 03 - 429685 թիւերուն

- Փոխադրամիջոցը ապահովուած է հետեւեալ վայրերէն.
- ժամը 4:30ին Վարդանանց Եկեղեցւոյ առջեւ,
- ժամը 4:45ին Սիմօնեան շէնքերուն առջեւ:

### ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՄՊԱՆԴԱՆՈՅԻ ՄԵՆԱԶՆՈՐԸԻ ՃԵՂՈՒՄ՝ ՓԱԿ ՊԱՇԱՐԱՆՈՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ

Պուրճ Համուտի քաղաքապետութիւնը փակ պահարանով աճուրդ կը կատարէ քաղաքապետութեան սպանդանոցին գծով, Ուրբաթ, 21 Նոյեմբեր 2003, կէսօրուան ժամը 12:00ին:  
Աճուրդին առաջարկները, նշուած պայմաններու համաձայն, կը ներկայացուին փակ պահարանով, որպէսզի համաձայն ձեւով արձանագրուին տետրակին (որուն մասին կարելի է տեղեկանալ քաղաքապետարանէն ներս աշխատանքի պաշտօնական ժամերուն, փոխան 150,000 Լ. ոսկիի), աճուրդի մասնակցի փափաքողները կրնան իրենց առաջարկները ուղղակի կամ թղթատարով յանձնել քաղաքապետութեան, ամենէն ուշը մինչեւ Հինգշաբթի, 20 Նոյեմբեր 2003, կէսօրուան ժամը 12:00:

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԼԵԱՆ

Մայրենի կատարելագործման կրթական կենտրոն

# Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԸ ՇՆՈՐՀԱԴՈՐԵ ԳԵՐՄԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՐԸ

Պերլինի մէջ տեղի ունեցաւ գերման բողոքական եկեղեցիներու նոր նախագահի ընտրութիւնը: Նոր նախագահ ընտրուեցաւ Վ. Հիւլլըրը: Նորընտիր նախագահը երկար տարիներու բարեկամն է վեհափառ հայրապետին: Ան անդամ եղած է Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդի Կեդրոնական վարչութեան եւ նախագահ՝ գերման եկեղեցիներու Միջին Արեւելքի յատուկ յանձնաժողովին: Յայտնէնք, որ Հիւլլըրը եպիսկոպոս շուրջ չորս ամիս առաջ այցելութիւն տուած էր վեհափառ հայրապետին, Անթիլիասի մէջ:

Իր շնորհաւորական նամակին մէջ Արամ Ա. կաթողիկոս յոյս կը յայտնէ, որ Հիւլլըրը եպիսկոպոսի նախագահութեամբ գերման եկեղեցիներու աւետարանչական, ծառայական ու էքիւմենիք առաքելութիւնը նոր ծաւալ պիտի ստանայ, ինչպէս նաեւ մարդկային իրաւանց, արդարութեան ու խաղաղութեան հարցերու գծով եկեղեցիները պիտի շարունակեն իրենց աշխատանքը:

## ՍԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱԲԻՈՅ ՄԵՋ ԱՆՁՆԱՊԱՆԱԿԱՆ...

Շարունակուած Ա. ԷջԸԸ

ծել ուժանիւթի գործարաններու եւ ամերիկեան ենթակառոցի մաս կապմող կեդրոններու դէմ: Մենուական ապահովութեան ուժերը Մայիսի 1-ի վեր երկրին տարածքին հարիւրաւոր քիւնեալներ ձերբակալած են եւ հսկայ քանակութեամբ պէնքեր գտած ու գրաւած են՝ ահաբեկչութեան դէմ պատերազմին ծիրէն ներս:

## ՂԱՏԱՊԱՐՏՈՒՄ

Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա երէկ դատապարտած է «ահաբեկչական» յարձակումը, յայտնելով, որ նման արարքներ կը միտին «ապակայունացնել, սարսափի մատնել եւ սպաննել»:

Մոցի գործակցութեան խորհուրդը դատապարտած է «վախկոտ եւ ահաբեկչական արարքը, որ աննշտ քաղաքայիններ թիրախ ունեցած է»:

Իրան, իր արտաքին գործոց նախարարին ձեռքով դատապարտած է յարձակումը, պայն «անմարդկային» նկատելով:

Ռուսիա «բարբարոս արարք» նկատած է ակնահարուժ, զոր խիստ ոճով դատապարտած է:

Ճափոն եւ Փաքիստան նոյնպէս դատապարտած են պայն:

Իտալիոյ արտաքին գործոց նախարարը, որուն երկիրը Ե. Միութեան ներկայ նախագահն է, Միութեան եւ իր երկրին անունով դատապարտած է արարքը, շեշտելով, որ անիկա կը հաստատէ անհրաժեշտութիւնը՝ «միասնաբար եւ առաւելագոյն վճռակամութեամբ պայքարելու ամէն տեսակի ահաբեկչութեան դէմ»:

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՋԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱԼՎՐՑԵԱՆԸ

Շաբաթ օր, երեկոյեան ժամը 5:00ին, Լիբանանի Թեմի Հայոց Առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեան քաղաքի առաջնորդարանին մէջ ընդունեց քանասէր, դասախօս Հայկապուն Ալվրցեանը, ընկերակցութեամբ Հ. Յ. Լիբանանի Հայ Դատի Մարմինի ներկայացուցիչներու:

Շուրջ մէկ ժամ տեւած հանդիպումին, Հայկապուն Ալվրցեան հանգամանօրէն ներկայացուց Ջաւախքի ու ջաւախքահայութեան ներկայ իրավիճակը, երկրին քաղաքական, տնտեսական, ընկերային դժուար կացութիւնը: Առաջնորդ սրբապարտ անհրաժեշտ նկատեց ջաւախքահայութեան օգնութեան փութալու համապատասխան զօրաշարժը, դիտել տալով, որ Ջաւախքը մանաւանդ Հայաստանի համար կը ներկայացնէ ռազմավարական մեծ կարեւորութիւն:

**ԱՅՔԻԼ AFHIL**

**ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ**

**RENT AND SALE**

**AT HOME**

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

**HOME MEDICAL EQUIPMENT SERVICES**

• Over Bed Table  
• All Kinds Of Oxygen  
• We Also Provide  
• Laboratory service.  
• Physiotherapist  
• Nurses Aids  
• P.T.S. (AMBULANCE)

**ՅՈՒՑԱՍՐԱՎ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ ԳՐԱՍԵՆՆԱԿ՝ ԱՅՔԻԼ, ԱՅՏՏԻ ԶԵՆԸ, Բ. ՅԱՐԿ ԵՏՈ. (01) 242556/7**

**NO MATTER WHAT YOU NEED... ... OR WHERE YOU NEED.**

## السفير

### ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

8 Նոյեմբերի լիբանանեան օրաթերթերը լուսարձակի տակ առած են իրաքեան պարզացումները, ամերիկեան քիմիոնական ուղղաթիռի մը վար առնուիլը, պաղեստինեան բռնագրաւեալ շրջաններուն մէջ շարունակուող բռնադարձները եւ նախագահ Ճորձ Պուշի արտադրութիւններուն նկատմամբ արաբական երկիրներուն կեցուածքները:

«Նահար» գրած է, թէ «Պէթ Նուք» վար առնուեցաւ եւ Թիքրի-թի մէջ 6 քիմիոնական սպաննուեցան: Ըստ թերթին, սուրիական սահմանին վրայ 12 անձեր ձերբակալուեցան:

«Լիուս» դիտել տուած է, թէ Քանթարի հարցով գերիներու փոխանակման գործընթացը կը դիմադրաւէ պանաբան դժուարութիւններ:

«Քիֆահ Արապի» գրած է, թէ 7 Նոյեմբերը «տխուր» օր մը եղաւ Պուշի համար, Անգարա որոշեց իր ուժերը չուղարկել Իրաք, իսկ իրաքեան ընդդիմութիւնը ամերիկացի քիմիոնները կը հալածէ գետնէն երկինք հրթիռով մը ուղղաթիռ մը վար առնելով. 7 քիմիոն սպաննուեցան:

«Մուսթաքալ» գրած է, թէ «Հարէթ» թերթին համաձայն, իբրեւ օժանդակութիւն հասած գումարներուն 800 միլիոն տոլարը իւրացուած է Շարունի կողմէ:

Ըստ թերթին, նախարարները կը յայտնեն, թէ կացութիւնը հիւսնդագին է, իսկ իրավիճակը՝ տակնուվրայ եւ բարդ:

«Լիուս»-ի համաձայն, Թուրքիա կը հրաժարի իր ուժերը Իրաք առաքելու որոշումէն, իսկ Թիքրիթի մէջ ուղղաթիռի մը վար առնուելով 6 քիմիոններ կը սպաննուին:

Ըստ «Քիֆահ Արապի»-ի, իսրայելեան բռնագրաւումներու ընթացքին 6 պաղեստինցիներ եւ մանուկ մը սպաննուած են, իսկ Փաուրլ կը պօրակցի «Ժընեի» նախաձեռնութիւնը:

«Սաֆիր» գրած է, թէ Նասրալլա կը մերժէ պատասխանել իսրայելեան լուրերուն եւ կեցուածքներուն, իսկ Քանթարի ընտանիքը կոչ կ'ուղղէ գերիներու փոխանակման գործընթացը անոր պատ արձակուումով պայմանաւորելու:

«Անուար» լուսարձակի տակ առած է ամերիկեան սարսափը՝ Իրաքի մէջ երկրորդ ուղղաթիռին վար առնուելէն ետք: Ըստ թերթին, Անան բացառեց, որ ՄԱԿ ստանձնէ Իրաքի քիմիոնարկան մարտի ղեկավարութիւնը:

«Սաֆիր»-ի համաձայն, Համաս եւ Աքսալի նախաձեռնելու կը խոստանան վրէժ լուծել տեղի ունեցող սպանութիւններուն:

Ըստ «Անուար»-ի, իշխանաւորները վրադած են պանաբան թղթածրարներով, իսկ ժողովուրդը կը խաբէն բնակեցման հարցով եւ քաղաքացիներուն ուշադրութիւնը կը կեդրոնացնեն անոր վրայ:

«Մուսթաքալ» գրած է, թէ վերջին 2 րէզ ան ի ն լիբանանեան պանաբան շրջաններու մէջ տեղի ունեցած ինքնաշարժի արկածներէն եւ անոնց շուրջ բարձրացած աղմուկէն ետք ապահովական ուժերը արշաւ կը խատանք կը տանի:

«Սաֆիր» գրած է, թէ Թուրքիա կը մերժէ իր ուժերը Իրաք առաքել, իսկ Ուաշինկթըն կը հասկնայ անոր պատճառներն ու մտահոգութիւնները:

«Նահար» նշած է, թէ Հըպալլա կառչած կը մնայ Քանթարիի, իսկ Շարուն կ'երաշխաւորէ գերիներու փոխանակումը:

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱԶՐ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

# Անուար

Կը ներկայացնեն՝

## ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ

**Նոյեմբեր 18ին ԻԻՆԷՍՔՕ** ի սրահին մէջ երեկոյեան **8:30-ին**

Trading Places 01 611600, CD-Theque Ashrafieh - ABC.  
Համագրայի կ'գրասանութ, Նարեկացի գրասանութ եւ Ազգային Դպրոցներէն

**BYBLOS BANK**

**WWW.lemagan.com**

**«ԱԶԳԱԿ»ԻՆ**

Վճարելով «Ազգակ»-ի փարեկան բաժանորդագիրը, մեր ընթերցողները օրաթերթին հետ կը ստանան նաեւ

## ԵՐԿՐ

Հարաբերորթ, ամսական յանդիմաններ  
«Պարիկ-Մզգիկ»-ը, «Անահիպ»-ը,  
«Նասաարդ»-ն ու «Ազգակ-ամսաթերթ»-ը:

**ԲԱԺՄՆՈՐԴԱԳԻՆԸ ԿՐՆԱԸ ՎՃԱՐԵԼ ԱՄՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՍՔ**

«ԱԶԳԱԿ» օրաթերթ, Շաղոյեան կեդրոն  
Հեռ. 01-260115, 01-241274, 01-258526  
Fax: 01-258529  
E-mail: [aztag@jnco.com.lb](mailto:aztag@jnco.com.lb)  
Website: [www.aztagdaily.com](http://www.aztagdaily.com)

**www.aztagdaily.com**







# Մայրնւթեան Արարողութիւն

## ՀՈՌՄԻ ՄՂՈՆԱՔԱՐԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՏՈՒՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԵԼՈՒ

«ԽՆԹՐՈՆԵՇԸՆԸՆԸ ԵՐԸԸՏ ԹՐԻՊՈՒՈՒՆ»Ի ԸԱՄԱՋԱՅՆ, ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՍԽՐԱՆՔ ՍԸ ԿՐԱՅ ԿՈՆԵԼ ԻՏԱԼԻՈՅ ԵՒ ԵԹՈՎՊՈՒՈՅ ՄԻՋԵՒ ՎԵՃԻ ՆԻԹՈ ՂԱՐԱՑՍԸ ՄՂՈՆԱՔԱՐԻ ՍԸ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Իտալացի ճարտարագէտ եւ պատմական կոթողներու վերանորոգութեան մասնագէտ Ճիորճիո Քրոչի օրերով պիտի աշխատի քանդելու համար այն, ինչ որ այլ ճարտարագէտներ չինած են տասնամեակներ առաջ: Ան զգուշութեամբ պիտի անջատէ եւ մասերու վերածէ հսկայական մղոնաքար մը, որ Եթովպիոյ Աքսում քաղաքէն Հոռոմ տարուած է իբրեւ ափրիկեան գաղութավայրերու վրայ Փաշական գերիշխանութեան խորհրդանշան:

Մղոնաքարը 1700 տարուան հնութիւն ունի: Ներկայիս անիկա կը գտնուի բանուկ խաչմերուկի մը վրայ, ուր աւելի քան կէս դարէ ի վեր ենթակայ է երթեւեկի խլացնող աղմուկին եւ հեղձուցիչ ապականութեան:

Աւելին. 1937ին մղոնաքարը 5 կտորի վերածուած է Հոռոմ փոխարդուելու համար: Ծարտարագէտներ զայն վերակազմելու ժամանակ պրոնզէ երկար գամեր խրած են անոր մէջ, որպէսզի ամրապնդեն շաղախով միացուած մասերը: Կարգ մը մասնագէտներ կ'ըսեն, թէ անկաբելի պիտի ըլլայ դարձեալ անջատել միացած մասերը եւ դուրս քաշել զամբը՝ առանց փշրելու քարը: Քրոչի ինքնին կը խոստովանի, թէ աշխատանքը դուրին պիտի չըլլայ:

«Չենք գիտեր, թէ մղոնաքարին կտորները ինչպէս միացած են իրարու եւ որքան տոկուն են: Հետեւաբար այս աշխատանքը կ'ընդգրկէ բաներ, զորս պարզապէս չենք կրնար նախատեսել,- կ'ըսէ ան:- Սակայն որեւէ դժուար աշխատանքի մէջ վտանգի բաժին մը կայ: Իրերու բնոյթը յայտնի է»:

Քրոչի կարելի չափով պակսեցուցած է վտանգի հաւանականութիւնը: Ան 24 մեթր բարձրութեամբ մղոնաքարը ծեփած է բնածուխի եւ ձգախէճի խոտնուրդով եւ ամբողջութիւնը առած է պողպատէ «խոզակի» մը մէջ, ինչպէս նաեւ երեք ճեղքերու մէջ խրած է 15 սմ. երկարութեամբ եւ 30 սմ. լայնքով պտուտակներ, որոնք պիտի օգտագործուին մղոնաքարին զանազան մասերը զոռուցութեամբ իրարմէ անջատելու համար: Գոմակարգիչներու միացած գործիքներ պիտի օգտեն Քրոչիին, որ տեւաբար հակակշիռի տակ պահէ գործընթացը, ճշգրտութեամբ կ'ընեն:


բանեցուցած ճնշումը եւ հետեւի քարին մէջ տեղի ունեցող որեւէ փոփոխութեան կամ բացուող ճեղքի: «Աշխատանքը կրնայ տեւել մէկ օր կամ երկու շաբաթ: Անիկա կարեալ է մութ ազդակներէ», կ'ըսէ ան:

Մղոնաքարը քանի մը կտորի վերածելով Եթովպիա ուղարկելը վերջ կը դնէ Իտալիոյ եւ Եթովպիոյ միջեւ երկարամեայ վէճի մը:

Վէճերը ծագեցան 1947ին, երբ ՄԱԿի հետ ստորագրուած խաղաղութեան դաշինք մը կը պահանջէր իբրեւ աւար տարուած արուեստի գործերու վերադարձը Եթովպիա: Հակառակ որ անիկէ ետք երկու պետութիւններուն միջեւ պաշտօնական 3 համաձայնագիրներ ստորագրուած են, սակայն մղոնաքարը մնացած է Հոռոմ: Մուսոլինիի զայն գետեղած էր գաղութավայրերու նախարարութեան շէնքին առջեւ, ուր այսօր հաստատուած են ՄԱԿի Ուտեիլքի եւ երկրագործութեան կազմակերպութեան գրասենեակները:

Ապա, 2002ի Մայիսի կայծակ մը հարուածեց մղոնաքարին զագաթը եւ տապանաքարի մեծութեամբ կտորներ նետեց գետին՝ անգամ մը եւս հրահրելով այն վէճը, զոր կարելի չէր եղած փարատել 50 տարուան դիւանագիտութեամբ: Եթովպիոյ պետութիւնը սկսաւ լուրջ բանակցութիւններ վարել մղոնաքարին վերադարձին առնչութեամբ:

«Կայծակը հարուածելէն ի վեր ճնշում կը բանեցնէր Իտալիոյ պետութեան վրայ, որովհետեւ կը հաւատանք, թէ մղոնաքարը լաւ չէ պաշտպանուած,- կ'ըսէ Իտալիոյ մէջ Եթովպիոյ դեսպանը:- Դիմեցիք Իտալիոյ պետութեան, որպէսզի յարգէ գոյութիւն ունեցող համաձայնութիւնները եւ ի գարման բոլորիս՝ անիկա ընդունալէ: Շատ ուրախ ենք եւ հրճուած»:



Սակայն Իտալիոյ մէջ բողոքի ձայններ բարձրացած են մղոնաքարը վերադարձնելու դէմ: Արուեստի պատմաբաններ եւ հնագէտներ մտահոգութիւն յայտնած են, թէ մղոնաքարը կրնայ վնասուելի զայն քանի մը մասերու բաժնելու ժամանակ: Քիտական ուսումնասիրութիւններ ցոյց տուած են, թէ անիկա լեցուն է բացուած քնեղով եւ մանրադիտակային ճեղքերով:

Մուսոլինիի յետֆաշական քաղաքական ժառանգորդները՝ Ազգային Միասնութիւն կուսակցութեան անդամները եւս դէմ են կոթողը վերադարձնելու: «Անիկա կարելու ընդմիջումը խորհրդանշէ մեզի համար,- կ'ըսէ անոնցմէ մէկը:- Պատերազմ էր, եւ այս կոթողը տրուած էր Իտալիոյ վարչակարգին»: Ան կ'առաջարկէ, որ Եթովպիա Իտալիոյ վերադարձնէ «այն բաները, զորս առած է մեզմէ»:

Սակայն ոմանց թամբագոյն մտավայրութիւնը այն է, թէ նման հռչակաւոր հնութեան մը վերադարձը կրնայ վտանգաւոր նախընթաց մը ըլլալ եւ արեւմտեան բազմաթիւ երկիրներ դնել անցեալին իբրեւ աւար տարուած հնութիւններ վերադարձնելու պարտաւորութեան տակ:

Էլիինի մարմարները, որոնք 200 տարի առաջ պոկուած էին Աթէնքի Փարթենոնէն եւ Բրիտանիա տարուած էին, ամէնէն աւելի հրապարակուած վէճի նիւթն են: Սակայն հարեւաւոր այլ պարզաքանդ կան, որոնք նուազ ծանօթ են:

Հոկտեմբերին Բրիտանիա Եթովպիոյ վերադարձուց ձեռագիր սաղմոսարան մը, զոր բրիտանացի զինուորներ իրենց հետ տարած էին 1868ին, Մակաուայի լեռնային ամրոցը թալանելու ժամանակ: Աքսումի մղոնաքարին վերադարձը պահանջող յանձնախումբին հիմնադիրը ձեռագիրին յանձնումը որակած էր «խորհրդանշական» եւ յոյս յայտնած էր, որ այլ հաստատութիւններ եւս ընդառաջեն նմանօրինակ պահանջներու:

«Իտալիոյ այս նախընթացն էտք հաստատութիւններ հետզհետէ աւելի նուազ պիտի կարենան պաշտպանել հնութիւններու վերադարձը մերժելու իրենց կեցուածքը,- կ'ըսէ Ատիս Ապեպայի համալսարանին նախագահը, որ նաեւ կը գլխաւորէ Մակաուայի եթովպիական գանձերուն վերադարձը պահանջող ընկերակցութիւնը: Անոնք պիտի ստիպուին բացատրել, թէ ինչո՞ւ իրենց պահած հնութիւնները այնքան կարեւոր են իրենց համար»:

Իտալիոյ մէջ Եթովպիոյ դեսպանը յայտարարած է, թէ իր պետութիւնը ուրախ պիտի ըլլար, եթէ վերադարձուէին նաեւ այլ հնութիւններ, թէ եւ պաշտօնական ոչ մէկ պահանջ ներկայացուած է: «Անոնք մեր պատմութիւնն են, մեր Ժառանգութիւնը, մեր ժողովուրդին հնադարեան մշակոյթը», կ'ըսէ ան:

## ՓԱՐԱԻՈՆՆԻՆ ԹՈՒԻՉՔԸ

ԹԵՐԵՄ ԱՐԱԵՆՐՈՒՆ ԴԻՍԱՅ ՆԱԽԱՅԱՐԱՉԱԿԻ ԵՒ ՆՈՒԱՃՈՂԻ ԻՐԵՏՑ ՊԱՏԿԵՐ ՄԵՆԵԼՈՒ ՄՏԱՇՈՂՈՒԹԵԱՄ՝ ԱՍԵՐԻԿԱՅԻԷ ԵԳԻՊՏՈՍԻ ԿԸ ՅԱՆՁՆԵՆ ՈՒՄՍԵՍ Ա. ՓԱՐԱԻՈՆԻՆ ՄՈՒՍԱՆ: «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» ԿԸ ԳՐԵ.

Եգիպտական Հին մովիա մը, որ կ'ենթադրուի, թէ կը պատկանի Ռամսէս Ա. փարաւոնին, վերջերս օգտակար Գահրէ փոխարդուելու մը մէջ: Մայրը՝ Քարլոս թանգարանը զայն վերադարձուցած է Եգիպտոսի, երբ բարձր արհեստագիտութեամբ եւ սքեներով կիրարկուած քննութիւններէ ի յայտ եկած է, թէ մովիան հաւանաբար կը պատկանէր մարդու մը, որ իշխած է 3000 տարի առաջ:

Քանապոյի Նիակարա Ֆոլք թանգարանը 1999ին մովիան ծախած էր ամերիկեան այս հաստատութեան: 1860ին հաւաքածոյ պահող քանապոյի մը զայն գնած էր զամբարանի գողորէ եւ նուիրած էր քանապոյի թանգարանին: Դամբարանի գողորէ՝ եգիպտացի ընտանիք մը թագաւորական մովիաներով լեցուն դամբարան մը գտած էին Լիւքսորի մօտակայ վայրի մը մէջ: Աթլանթիկ թանգարանին համաձայն, ընտանիքը նոյն վայրէն այլ գանձեր եւս վաճառած էր, մինչեւ որ 1881ին պաշտօնապէս յայտնաբերուած էր դամբարանը՝ դատարկ գազաղով: Մովիան իր երկրին մէջ զիմաւորութեամբ, Գահրէի Ազգային թանգարանին մէջ տեղի ունեցած յատուկ հանդիսութեան մը ընթացքին: «Մենք Նեղոսի գաւակներն ենք: Բարի եկար Ռամսէս, բարձր գնահատուած Եգիպտոսի շինարար թագաւոր», երգեցին դազալին շուրջ կանգնած դրոյցակաւ աշակերտներ: Եգիպտոսի Հնութիւններու գերագոյն խորհուրդին պատասխանատուն՝ Չահի Հաուա, որ Միացեալ Նահանգներէն ընկերակցեցաւ մովիան դէպի տուն թռիչքին, կ'ըսէ, թէ անիկա յառաջիկայ տարի պիտի փոխարդուի Լիւքսորի

## -«ՎԵՐԱՄԻԱՑԱԾ ՄԱՐՄԱՐՆԵՐ»

ԷԼԿԻՆԻ ՄԱՐՄԱՐՆԵՐ ԿԸ ՄԵԿՏԵՐՈՒՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽԱՐԿԱՆՔԸ ԱՌԹՈՂ ՑՈՒՑԱՆԱԿԵՍԻ ՍԸ ՄԵՋ, ՈՐՈՒՆ ՆՊԱՏԱԿՆ Է ԸՆԱԳԱՐԵԱՆ ԸՆԱԳԱԿՆԵՐՈՒ ԿԵՐԱԳԱՐՁՆԵԼ ԻՐԵՏՑ ԵՐԿԻՐԸ: «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» ԿԸ ԳՐԵ.



ԼՈՍՏՈՆԻ տարուած քանդակները գումաւոր ներկուած են, իսկ միւսները իրենց բնական գոյնով են:

Լոնտոնի ժամանակակից արուեստներու հիմնարկին մէջ վերջերս բացուած կատարուած է ցուցահանդէսի մը, որ ցոյց կու տայ, թէ էլիպի մարմարները ինչ երեւոյթ պիտի ունենային, եթէ վերամիանային: «Վերամիացած մարմարներ» վերնագիրով ցուցահանդէսը 200 տարի առաջ լոյր տ էլիպի կողմէ Բրիտանիա տարուած քանդակները կը պատկերէ Աթէնքի մէջ մնացած պատասխաններուն կողքին:

Յուցահանդէսը առաջին անգամ կայացած էր Բրիտանիոյ խորհրդարանին մէջ, այս տարուան սկիզբը: Յառաջիկային անիկա պիտի ճամբորդէ Օքսֆորտ եւ Քէյմպրիջ: Չայն կազմակերպողները կը պաշարին 1811էն ի վեր Բրիտանական թանգարանին մէջ ցուցադրուող հնադարեան քանդակները Աթէնք վերադարձնելու համար:

«Կը տիրէ այն սխալ համոզումը, թէ Փարթենոնի բոլոր քանդակները կը գտնուին Բրիտանական թանգարանին հաւաքածոյին մէջ,- կ'ըսէ Փարթենոնի մարմարներուն վերադարձին համար պայքարող բրիտանական յանձնախումբի մը ներկայացուցիչը:- Այսուհանդերձ այս ցուցահանդէսը կ'ապացուցէ, թէ այդպէս չէ»:

Նմանօրինակ պայքար տանող այլ կազմակերպութիւններ մարմարներուն սեփականութեան հարցը կը հետապնդեն՝ օգտագործելով Ողիմպիական խաղերը, որոնք տեղի պիտի ունենան յառաջիկայ տարի, Յունաստանի մէջ: Անոնք որեւէ ժամանակէ աւելի այս առիթով անհրաժեշտ կը նկատեն մարմարներուն վերադարձը: Այսուհանդերձ Բրիտանական թանգարանը բազմիցս յայտարարած է, թէ մարմարները պէտք չէ վերամիանան, որովհետեւ անկարելի է զանոնք ճիշդ ձեւով քով քովի բերել:

Մարմարէ բարձրաքանակներուն մեծ մասը բաժնուած է. օրինակ՝ ծովու աստուած Պոսիտոնի իրանը կը մնայ Աթէնքի մէջ, իսկ կռնակն ու ուսերը կը գտնուին Բրիտանիոյ մէջ: Այլ քանդակի մը մէջ պատկերուած տիպարի մը ոտքը կը գտնուի Լոնտոնի մէջ, իսկ մնացեալ մասը՝ Յունաստանի:

## ԵԳԻՊՏՈՍ Կ'ՈՒՉԷ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ «ՓՈՒՆ ԱՌՆԵԼ»

ԵԳԻՊՏԱՅԻԷ ԱՃԽԱՐԻՑԻ ՂԵՆԱԲՈՐ ԹԱՍԱՐԱՆՆԵՐԵՆ ԿԸ ԽՆԴՐԵՆ ԺԱՍԱՆԱԿԱԿՈՐ ԿԵՐԱԳԱՐՁԸ ԻՐԵՏՑ ԵՐԿՐԵՆ ԻԲՐԵՒ ԱԿԱՐ ՏԱՐՈՒՄ ԸՆԴԱԿԱԿՈՐ ԸՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ: «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵ ՍՏԵՂՈՒՄԸ ԲԱՆՈՒՄԸ

Եգիպտոսի իշխանութիւնները ձեռնարկած են ժամանակին իրենց երկրէն իբրեւ աւար տարուած հնագիտական իրերու վերադարձը պահանջող արշաւի մը: Անոնք կ'ուզեն իրենց պատմական ժառանգութիւնը ցուցադրել Գահրէի թանգարանին հիմնարկութեան 100ամեակը նշող ցուցահանդէսի մը առիթով: Աշխարհի մէջ բազմաթիւ թանգարաններ եգիպտական հնութիւններու հաւաքածոներ կը պահեն:

Գահրէի թանգարանը պատրաստած է ցանկը պահուցուած հնութիւններուն, որոնց շարքին գլխաւոր տեղ կը գրաւէ հնադարեան վարդապոյն քարը, որ կը գտնուի Բրիտանական թանգարանին մէջ, եւ Նեֆերթիթի կիսանդրին՝ Պերլինի թանգարանին մէջ:

Եգիպտոսի Հնութիւններու գերագոյն խորհուրդին ընդհանուր քարտուղարը՝ Չահի Հաուա կը գլխաւորէ նման իրերու վերադարձը պահանջող արշաւը: Անոր նորագոյն ծրագիրը կ'ընդգրկէ «Եգիպտոսէն գողցուած բոլոր հնութիւններուն վերադարձը» յոսանքի կայտարարուած ցուցահանդէսին համար:

Հաուա արդէն ձեռնարկ փորձ մը կատարած է Բրիտանական թանգարանէն խնդրելով, որ երեք ամսուան համար փոխ տայ 2000 տարուան վարդապոյն քարը՝ զայն Եգիպտոսի թանգարանին վերանորոգութեան առիթով ցուցադրելու համար:

Բրիտանական թանգարանին մէկ բաները ըսած է. «Թանգարանին պատասխանատունները համաձայն չեն «սրբազան» իբր փոխ տալու գաղափարին: Նման իրեր փոխ տալ կը նշանակէ յուսախաբուութիւն պատճառով թանգարանին տարեկան 5 միլիոն այցելուներուն»: Ոմանք նաեւ նոյնիսկ այն մտավայրութիւնը ունին, թէ վարդապոյն քարը Եգիպտոս հասնելէ ետք կրնայ երեք չվերադառնալ:

Վարդապոյն քարը յայտնաբերուած է 1799ին, Նեղոսի մոտերին եւ կը պարունակէ եգիպտական մեհակագրութիւնները վերածնելու բանալին, շնորհիւ անոր ընկերակցող յուսարէն թարգմանութեան: Յրանսացիք զայն բրիտանացիներուն յանձնած են 1801ին: Արուեստեւ, 1802ին ի վեր անիկա կը գտնուի Բրիտանական թանգարանին մէջ:

«Բրիտանական թանգարանին որ բաժանմունքին պատասխանատուն պիտի ուզէր, որ

տարուէր այնպիսի իր մը, որ հիմնական դեր ունի հաստատութեան գործունէութեան մէջ եւ կը ներկայացնէ ոչ միայն եգիպտական հնութիւնները, այլ նաեւ եգիպտական հնագիտութիւնը՝ իբրեւ քաղաքակիրթ աշխարհին մէկ մասը», կ'ըսէ Բրիտանական թանգարանին Եգիպտական թանգարանի նիւ Եգիպտական թանգարանին պատասխանատուն:



Վարդապոյն քարը կու գայ Ն. Բ. 196 թուականէն

Սակայն Հաուա վճռած է համոզել թանգարանին պատասխանատուները, որ փոխեն իրենց կեցուածքը, որպէսզի փորագրուած քարը Գահրէի թանգարանին մէջ երեք ամսուան վրայ երկարող ցուցահանդէսի մը գլխաւոր ցուցանմունքը ըլլայ: Ան ըսած է, թէ Եգիպտոսի թանգարանը պիտի մերժէր այլ հաստատութիւններու փոխ տալ հնութիւններ, միայն այն պարագային, երբ անոնք դիւրաբեկ էին:

Հաուա խոստացած է Թուրքիայի թանգարանին մէջ ցուցադրուող Նեֆերթիթի թագուհիին 3300 տարուան կիսանդրին վերադարձնելու պահանջը: Գերմանացի հնագէտ մը, որ 1900ական տարիներուն կ'աշխատէր Եգիպտոսի մէջ, կիսանդրին իրեն հետ տարած էր Գերմանիա՝ օգտուելով օրէնքի, որ իրեն կ'արտօնէր իր պեղած իրերուն 50 առ հարիւրը առնելու: Սակայն Հաուա կ'ըսէ. «Մենք կը խնդրենք վերադարձը այս կիսանդրին, որ ապօրինի կերպով դուրս հանուած է Եգիպտոսէն»:



Եգիպտոսի Հնութիւններու գերագոյն խորհուրդին պատասխանատուն՝ Չահի Հաուա, որ Միացեալ Նահանգներէն ընկերակցեցաւ մովիան դէպի տուն թռիչքին, կ'ըսէ, թէ անիկա յառաջիկայ տարի պիտի փոխարդուի Լիւքսորի

Պատրաստեց՝ Լ. ԿԻԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

«ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ 3ԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
8:45.- «Աստղեր»
9:00.- «Ռատիո - Թատրոն»... կը ներկայացնեն Մարի Ռոզ Մանուկեան եւ Մանուէլ Մարգարեան
9:40.- «Առաւօտեան տուն»
11:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
1:30.- Շայաստանեան լուրեր
3:00.- Արաբերէն յայտագիր.
Շարքագրոյց ընէյթեան «Ալրայ ալամ» թերթի մշակութային էջի պատասխանատու Ժիհատ Այուպիի հետ. կ'անդրադառնայ երգչուհի Սապահի կեանքին անձնական եւ մշակութային հանգրուաններուն
4:45.- «Բարի երեկոյ Վանայ Չայնէն»... ուղղակի ձայնասփռում՝ ալլազան եւ հետաքրքրական նիւթեր, երգեր, հարցազրոյց եւ այլն. յայտագիրին հիւրերն են Շայ Աւետարանական Թորոսեան վարժարանի աշակերտները
7:00.- «Վանայ Սիոր»... անցնող շաբթուան մարզական լուրերու ներկայացում.

ՃԱՏՐԱԿ



1

ՃԵՐՄԱԿՆԵՐԸ ԿԸ ԽԱՂՆ ԵՒ ՄԱԶ 2 ԵԱՐԺՈՒՄՈՎ



ԱՆՊԵՐԹՕ - ՄՈՒՍՍԱ

2

ՃԵՐՄԱԿՆԵՐԸ ԿԸ ԽԱՂՆ ԵՒ ՄԱԶ 2 ԵԱՐԺՈՒՄՈՎ



ԱՆՏՐԵՅ ՏԻԵՍԱՐՈՎ

«ԱԶԳԱԿ»Ի


ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻՒՒՆԵՐԸ

«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

«ԴԵՄ ԱՌ ԴԵՄ»

Հարցազրոյցներու շարք

«ԱԶԳԱԿ»Ի ՀԱՐՅԱԶՐՈՅՅԸ ՓԻԹԸՐ ՊԱԼԱՔԵԱՆԻ ՀԵՏ



«Ազգակ»ի Հինգշաբթի 13 Նոյեմբերի թիով կարդալ մեր շահեկան հարցազրոյցը «ԱՅՐՈՂ ՏԻԳՐԻՍԸ» գիրքի հեղինակ՝ Փիթըր Պալաքեանի հետ:

ԽԱՉԲԱՌԻ ԹԻՒ 5587

Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

Table with 11 columns and 11 rows for the crossword puzzle grid.

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)
Քիչ մը թուլցած է ձեր տրամադրութիւնը, ծուլութեան նշաններ կու տար: Հարկ է, որ սքափիք, որպէսզի ետքը չզղջար: Մանաւանդ եթէ ուսանող էք:
ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
Մանր- մունր հարցերով մի՛ զբաղիք, ոչ ալ կարելու է թուրեւ տուրք ըսի - ըսանքերուն: Ձեր անտրամադիր վիճակը կ'ազդէ նաեւ ձեր շրջապատին: Ուրեմն եղէք անտարբեր:
ԵՐԿՈՒՇԱԲԹ (22 Մայիսէն 21 Յունիս)
Կ'ուզէք փոխել ուրիշներուն պատկերացումները ձեր մասին, բայց անոնք չեն հասկնար ձեր միտքը: Կարելու էր մի՛ տար այդպիսի յամառ մարդոց:
ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)
Կը ցանկար փոփոխութիւն մտցնել ձեր կեանքին մէջ, բայց չէք կրնար, այս պատճառով դուք ձեզ կը զգար անկարող ու կը ջղայնանաք: Կեանքը առէք այնպէս, ինչպէս որ է:
ԱՌԻԻԾ (24 Յունիսէն 23 Օգոստոս)
Ձեր նկատմամբ կ'արհամարհէք մարդոց վերաբերումը: Այս կը վերաբերի միայն բարեկամութեան: Այսուհանդերձ, եղէք հանդիսակաւոր եւ յարգեցէք այլոց կարծիքը:
ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
Հանդիպում մը կամ հարցազրոյց մը, գոր կը նկատիք աւարտած, այսօր յայտնի պիտի ըլլայ, որ վերջ չէ գտած: Հանդարտութեամբ լուծեցէք օրուան խնդիրը:
ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
Մի՛ հրաժարիք ճամբորդելու ծրագրէն՝ ճամբորդութեան սակին քիչ մը սուղ ըլլալուն պատճառով: Կարճ ժամանակի մը համար յետաձգեցէք ծրագրիք:
ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
Կը ցանկար շատ գնումներ կատարել, պարպել վաճառատները, մինչդեռ ձեր պիտուէն այդքանին չի դիմանար: Մտածեցէք խնայողութեամբ մասին:
ԱՂԵՂՆԱԻՌ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Դուք, ձեր ամուսինը կամ ձեր մէկ հարազատը կ'ուզէք երբաւ տեսնելու ուրիշ երկիր մը: Դուք քիչ մը պիտի ընդդիմանաք՝ վախճալով, որ ան երկար կը մնայ գացած տեղը: Համաձայնեցէք:
ԱՅԾԵՂՋԻՌ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
Երբեմն կը դժգոհիք ձեր աշխատանքէն եւ բոլորովին ուրիշ բաներ կը սպասէք: Ինչո՞ւ: Բնաւ մի՛ սրտնեղիք ձեր վիճակէն, այլ գոհացէք ձեր ունեցածով:
ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)
Պիտի բարկանաք ձեր գաւակներուն կամ ձեր շրջանակին կարգ մը անձերուն, որպէսզի անոնք աշխատին կարգապահութեամբ: Շատ պահանջկոտ մի՛ ըլլաք, գոր տեղ մի՛ ջղայնանաք:
ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)
Տեսիլներ ձեր գործիքներէն կամ սարքերէն մէկը պիտի խանգարուի, պիտի ստիպուիք նորոգել տալ: Այս մասին բնաւ մտածած չէիք. եղածը անակնկալ մըն է:

ԹԻՒ 5586

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԹՈՒՍԸ

Table with 11 columns and 11 rows for the crossword puzzle grid.

ՕՐԱՏԵՏՐ

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՄ / ՅՈՒՑԱՀԱՆԴԵՄ / ԵՐԳ

ՃԵՉԻ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԵՐԱԺԻՇՏ ՄԱԹԱՆԱ ՌՈՊԸՐԹՅԻ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԵԼՈՅԹՆԵՐԸ



Ճէպի ամերիկացի երաժիշտ՝ ՄԱԹԱՆԱ ՌՈՊԸՐԹՅ


Հետեւելով ամերիկեան ճէպի դէմքերը Լիբանան հրաւիրելու եւ քանի մը ելոյթներով անոնց երաժշտութիւնը լիբանանցի հանրութեան ծանօթացնելու միտող լիբանանեան գիշերային զբօսավայրերու նախագահներէն, «Պար Լուի» գիշերային զբօսավայրը իր կարգին կը հրաւիրէ ամերիկացի սարսֆոնսախար Մաթանա Ռոպըրթը: Նիւ Եորքէն հասած այս արուեստագետը, 10 - 15 Նոյեմբերի գիշերուան ժամը 9:30էն սկսեալ շուրջ երկու ժամ տեւող յայտագիրով մը պիտի մատուցէ դասական ճէպ երաժշտութեան զուլի գործոցներէն ընտրանի մը, ինչպէս նաեւ՝ իր երաժշտական պատշաճեցումներէն, մշակումներէն եւ յօրինումներէն օրինակներ: Մաթանա Ռոպըրթը ճէպ երաժշտական սեռին պատկանող եղանակներ յօրինելու կողքին կը յատկանշուի նաեւ տեղւոյն վրայ ստեղծագործելու եւ եղանակին մէջ փոփոխութիւններ յառաջացնելու կարողութեամբ: Անոր ոճը կը յայտնաբերէ պղնձեւորները ճէպի երաժիշտներու աւելի տարեց սեռունդի մը, որոնց գործերուն ունկնդրութեամբ ան հասակ նետած է չիքալոյի մէջ: Բազմաթիւ մենահամերգներով տարբեր երկիրներ շրջած եւ փառատօներու մասնակցած ու մրցանակներու տիրացած Մաթանա Ռոպըրթը ելոյթներ ունեցած է ճէպի նշանաւոր երաժիշտներու հետ, ինչպէս՝ Տոն Պայրըն, Սթիւ Լէյսի, Էնթոնի Պէյքսթըն եւ ուրիշներ: Մաթանա Ռոպըրթը ներկայիս կը պատրաստէ իր առաջին ձայնասկզբ, որ կը բաղկանայ իր մենահամերգներէն, որ առաջին անգամ հանրութեան պիտի ներկայացուի Նիւ Եորքի մէջ, Նոյեմբերի վերջը:

Weather forecast section with title 'ՕՐԱՏԵՏՐ' and 'ՕՐԵՆԵՒՈՅ' and a small weather icon.

ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԿՆՆԱԶ

Large advertisement for 'ԱԶԳԱԿ' magazine celebrating its 50th anniversary, including contact information and a date '10 ՆՈՅԵՄԲԵՐԻՆ'.

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ՖՈՒԹՊՈՒԼ. ԲԱՐԵԿԱՍԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

## Հ.Մ.Ը.Մ. - ԱՀՏ 1 - 3

Երեկ, կեսօրից ետք ժամը 2:30ին Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական կազմը բարեկամական մրցում մը կատարեց Ահտի դէմ:

Հակառակ Յակոբ Տօնապետեանի եւ վարդան Ղապարեանի բացակայութեան, Հ.Մ.Ը.Մ. յախաղարկութիւն ցուցաբերեց ամբողջական կազմով դաշտ ներկայացած Ահտի դէմ:

Ահտ մրցումի հաշիւը բացաւ 41րդ վայրկեանին: Ա. կիսախաղը վերջ գտաւ 1 - 0 արդիւնքով ի նպաստ Ահտի:

Բ. կիսախաղին Հ.Մ.Ը.Մ. ստացաւ երկու այլ կողեր եւ նշանակեց մէկ կող, որ կրեց Դրոյի ստորագրութիւնը:

Պէտք է ըսել, որ մրցումը եղաւ հաւասարակշռուած, պարզապէս ֆինիշին կի առումով մրցակից կազմը աւելի բախտաւոր դուրս եկաւ:

### ՆՈՐ ՄՐՅԱՆԻՇ

Այսօր Պէյրութ կը ժամանէ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական կազմին նորանշանակ մարզիչը՝ Ուրբանացի Ժոզէֆ Պետրիս: Մասնամասնութիւնները՝ յաջորդող օրերուն:

### ԹՐԻՓՈՒԼԻԻ

## ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԴԱՇՏԸ ԿԸ ՎԵՐԱԳՏՆԵ ԻՐ ՓԱՅԼԸՆ

Թրիփոլիի Ողիմպիական մարզադաշտի վարչութիւնը ընթացքի մէջ է վերանորոգելու դաշտը, որ լքուած էր անցեալ ամիսներուն: Յառաջիկայ գարնան դաշտը պիտի դրուի հանրութեան եւ մարզական շրջանակներու տրամադրութեան տակ եւ արդէն անոր հիւրընկալելիք մրցումներու յայտագիրը կը հարստանայ:

Կարգ մը տեղեկութիւններու համաձայն, դաշտի վարչութիւնը կապ հաստատած էր Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնին հետ, առաջարկելով որ Ռամատանի ժամանակաշրջանին երեկոները դաշտը հիւրընկալէր Ա. դասակարգի ախոյեանութեան մրցումները: Սակայն ֆետերասիոնը որոշեց Ռամատանի ընթացքին ախոյեանութեան մրցումներ չկատարել եւ հետեւաբար այդ ծրագիրը ի գործ չդրուեցաւ:

### ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

## ՄԱՐՍԷՅ - ԼԻՈՆ՝ 1 - 4

Ֆրանսայի ֆուտբոլի ախոյեանութեան մրցումներուն Մոնաքօ 1 - 0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց շնորհիւ Փրշոյի կողին, որ եկաւ 81րդ վայրկեանին: Փրսօ իր կազմին հետ հիանալի շաբաթ մը ունեցաւ եւ «Զէմփիլըն» Լիլի ծիրէն ներս կատարած իր մրցումին եւս հանդիսացաւ Մոնաքոյի աստղը՝ 4 կոլ նշանակելով: Այսպիսով Մոնաքօ առաւել եւս ամրապնդեց պարագլուխի իր դիրքը:

Ստորեւ շաբաթավերջի մրցումներուն արդիւնքները.

Լը Մանս - Մէթց	2 - 0
Նանթ - Փարիզ Սէն Շերմէն	0 - 1
Նիս - Պասթիա	2 - 0
Ռէն - Լիլ	2 - 2
Աժաքսիօ - Մոնաքօ	0 - 1
Օքսէն - Կէնկան	3 - 0
Լանս - Մոնփելիէ	3 - 2
Սոշօ - Թուլուզ	3 - 1
Մարսէյ - Լիոն	1 - 4
Սթրասպուրկ - Պորցօ	1 - 1

### ԲԱՅԱՌԻԿ ԶՐԶԱՊՏՈՅՆ ՆՈՐ ՏԱՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ ԴԵՊԻ ԿԻՊՐՈՍ

29 տարիներու ընթացքին առաջին անգամ ըլլալով այցելութիւն Նիկոսիոյ հայկական հիմ վանքը, 30 Դեկտեմբերէն - 2 Յունուար

Օր մը՝ Այանափա եւ Լաոնաբա, օր մը՝ Փաֆոս քաղաքը, կենդանաբանական պարտէզ, օր մը՝ Նիկոսիա: Չիմեր: Las Palmiers A Class պանդոկը Լաոնաբա փոխան 360\$ միայն 240\$, իսկ Apollonia Beach 5 աստղանի շքեղ պանդոկը Լիոնաբա քաղաք, փոխան 575\$ միայն 335\$:

ԵՄԱՌՕԹ. Սոյն շրջապտոյտին կրճած մասնակցի սուրիական անցագիր ունեցողներ, պայմանաւ որ իրենց անցագիրին մէջ յիշուած ըլլալ CYPROS մուտքը, միւս երկիրներու շարքին, սուրիացիներուն վիզան ձրի: Արձանագրութիւն՝ ԱՇՃԵԱՆ ԹՈՒՐԶ, հեռ. 01-240654, 01-261177 եւ 03-233978:

Կը վաճառենք օդանաւի տոմսեր աշխարհի բոլոր կողմերը, շատ ատեն զինքով: Լաոնաբա երթ ու դարձ օդանաւով, Կալէպէն, միայն 180\$:

Ամեն Կիրակի Դամասկոս - Սեւոնյա - Սաալուկ միայն 12\$:

### ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

## ՉԵԼՍԻ ԶԱՆՉԱԽԵՑ ՆԻԲԵՍԸԸ. ԱՐՍԵՆԱԼ ՅԱՂԹԵՑ

Չելսի կարծեք հետզհետէ կը հաստատէ այն վարկածը թէ կարելի է դրամով յաջողութիւն գնել: Այսպէս, անգլիական ակումբի բազմամիլիոն տոլարներ արժող կազմը բոլորած եղաւ հիանալի շաբաթ մը երբ 5 անպատասխան կոլեր նշանակեց Նիւքեմբըրգի բերդէն ներս:

Մրցումի առաջին կիսախաղին Քլաուստի Ռանիէրի կազմը անպայելի էր, եւ յաջողեցաւ 4 կոլեր արձանագրել:

Ռուս միլիտատէր Ռոման Ապրամովիչը հրճուանքով կը դիտէր կոլերը կլէն ձոնարնի, Հերնան Բրեստիլի եւ Տամիէն Տաֆի, որոնց «ձեռք ձգած» էր շնորհիւ իր ծախսած միլիոնաւոր տոլարներուն: Նիւքեմբըրգի բախտը չծախսեց:

Այան Շիրրը կոկորդի բորբոքումի պատճառով հետացաւ դաշտէն, իսկ կիսախաղէն հինգ վայրկեան առաջ

Նիւքեմբըրգի ստացաւ կարմիր քարտ մը եւ մրցումը շարունակեց 10 մարզիկներով:

Արսենալ-Թոթէնհամ տրըպիւն վերջ գտաւ ի նպաստ առաջինին: Հակառակ այն իրողութեան, որ Արսենալ 8 օրուան մէջ 3րդ անգամ ըլլալով դաշտ ներկայացաւ, սակայն Փիլիպսի եւ Լիոնիպըրկի կոլերուն շնորհիւ կրցաւ ապահովել երեք կէտերը: Նշենք, որ մրցումի 5րդ վայրկեանին Թոթէնհամ բացած էր մրցումի հաշիւը Աստրըթընի շնորհիւ:

Ստորեւ շաբաթավերջի մրցումներուն արդիւնքները.

Արսենալ - Թոթէնհամ	2 - 1
Ասթ. Կիլա - Միտլըզպորթ	0 - 2
Պոլըրն - Սաութհեմթըրն	0 - 0
Չարլըրն - Ֆուլհամ	3 - 1
Փորթսմութ - Լիծ	6 - 1
Չելսի - Նիւքեմբըրգ	5 - 0
Լիվըրպուլ -	

ՄաՆչ. ԵուՆ. 1 - 2  
ՄաՆչ. Սիթի - Լալսպըրթ 0 - 3

Նշենք, որ այսօր երեկոյեան ժամը 10:00ին տեղի պիտի ունենայ Պէյքալըն - Էվըրթըն մրցումը:

Շաբաթավերջի մրցումներէն ետք Արսենալ 30 կէտով կը շարունակէ գրաւել դասաւորման պարագլուխի դիրքը: Չելսի ունի 29 իսկ Մանչեսթըր Եունայթըդը՝ 28 կէտ: 4րդ եւ 5րդ դիրքերը կը գրաւեն Չարլըրն (21 կէտ) եւ Պիլմիլկիէմ (20 կէտ):

Կոլսքորըրներու ցանկը կը գլխաւորէ Արսենալի ֆրանսացի ումբարկու Թիէրի Հանրի՝ 9 կոլ նշանակած է Այան Շիրրը (Նիւքեմբըրգ): 8ական կոլ նշանակած են Մայքըլ Օուրն (Լիվըրպուլ), Նիքոլաս Անելլա (Մանչեսթըր Սիթի) եւ Ռուս Վան Նիսթըրոյ (Մանչեսթըր Եունայթըդ):

### ԷՆ. ՊԻ. ԷՅ.

## ՍԱՆ ԱՆԹՈՆԻՕ ՍՓԸՐԶ ԴԱՐՉԵԱԼ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ

Էն. Պի. Էյ.ի ախոյեան Սան Անթոնիօ Սփըրզ, երէկ կրեց իր յաջորդական պարտութիւնը, այս անգամ 81 - 78 արդիւնքով

պարտուած վերադառնալով Տայասի դէմ իր մրցումէն: Նշենք, որ

Սփըրզ Ուրբաթ օր տեղի տուած էր Լէյքըրփի դէմ զագաթի մրցումին:

Ստորեւ կը ներկայացնենք երէկուան մրցումներուն արդիւնքները եւ դասաւորման պարզած պատկերները.

Միլսթոթթա - Մայնմի	88 - 79
Հիւսթըն - Օրլանտօ	96 - 86
Շիքաօ - Նի Օրլինս	109 - 106
Քլիվլընտ - Ուաշինկթըն	111 - 98
Տայաս - Սան Անթոնիօ	81 - 78
Եուրթ - Մաֆիս	96 - 89
Միլուոքի - Նի Եորք	90 - 89
Փորթլէնտ - Աթլանթա	90 - 83

### ● ՍՐԵԲԵԼԵՆ ԾՐՁԱՆ (Ատլանտեան գօտի)

ՅԱՊԹ.	ՊԱՐՏ.
Նի Ճըրփի Նէթց	3 3
Ֆիլատելֆիա Սիքսըրզ	3 3
Ուաշինկթըն Ուիլըրտօ	3 3
Պոսթըն Սեյթիքս	2 3
Նի Եորք Նիքս	2 4
Օրլանտօ Մէճիք	1 6
Մայնմի Հիթ	0 6

### (Կեդրոնական գօտի)

Ինտիանա	5 1
Տիքսոյթ	4 1
Նի Օրլինս	5 2
Թորոնթօ	3 2
Միլուոքի	4 3
Շիքաօ	3 4
Աթլանթա	1 5
Քլիվլէնտ	1 5

### ● ՍՐԵԲՄՏԵՆ ԾՐՁԱՆ (Միջարեւմտեան գօտի)

Հիւսթըն Ռոքէթց	4 1
Եուրթ Ճէյ	4 2
Միլսթոթթա Վոլվոյ	4 3
Տայաս Մալթրիքս	4 3
Տեննիս Նակէթց	3 3
Սան Անթոնիօ Սփըրզ	3 4
Մենֆիս Կրիվիլ	2 4

### (Խաղաղական գօտի)

Սիթըրլ Սուփըրսոնիքս	3 0
Լոս Անճելըս Լէյքըրզ	5 1
Սաքրամենթօ քինկզ	3 2
Կորլտ. Սթիթ Ուորիքըրզ	3 2
Փորթ. Թրէյլ Պէյքալըրզ	3 3
Ֆէօնիքս Սանկ	2 3
Էլ. Էլ Բիվըրզ	1 2

### ՃԱՏՐԱԿԻ ՕՐ՝ ԱՅՆՃԱՐԻ ՄԵՉ



Կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային վարչութեան երէկ, Այնճարի Հ.Մ.Ը.Մ.ի ակումբին մէջ տեղի ունեցաւ «ճատրակի օր»:

Այս առիթով, պատրաստուած էր յատուկ յայտագիր: Այնճարի վարչութեան անունով խօսք



առաւ վարչութեան ատենապետ եղբ. Ժաք Տաղլեան, որ բարի երթ մաղթեց ճատրակի խումբին: Շրջանային վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Յակոբ Քէշիշեան, որ հաւատք յայտնեց, թէ Այնճարի ճատրակի խումբը պիտի ունենայ աշխուժ գործունէութիւն:

Ապա խօսք առին Լիբանանի ճատրակի ֆետերասիոնի անդամ Էլի Հուլիշեան, որ խօսեցաւ ճատրակի օրէնքերուն մասին, եւ Խաչիկ Մուրատեան, որ ճատրակի մարզումներու ինչպէս նաեւ մրցաշարներու եւ ախոյեանութիւններու նախապատրաստութիւններու մասին տեղեկութիւններ փոխանցեց:

Տեղի ունեցաւ ճատրակի մրցաշարք մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին ճատրակի նորարաց ակումբի 10 անդամներ: Առաջին դիրքը գրաւեց Վահագն Մանճեան, երկրորդ հանդիսացաւ՝ Ասօ Սթամպուրեան իսկ երրորդ՝ Վազգէն Պաքալեան:

Ակումբի անդամներուն հետ բարեկամական մրցումներ կատարեց արաբական աշխարհի ախոյեան Բնարիկ Մուրատեան:

Նշենք, որ յաջորդող շաբաթներուն Շրջանային վարչութիւնը պիտի շարունակէ մասնաճիւղերու գործունէութիւններուն թափ տալու աշխատանքները:

### ՔՈՒՐՆԻՔՈՎԱ Զ՛ՈՒԶԵՐ ԼՔԵԼ ԹԵՆԻՍԱԸ

Աննա Քուրնիքովա երէկ յայտարարեց, թէ հակառակ կոնակի քրոնիք վնասուածքի, կը մերժէ հետանալ թենիսի դաշտերէն:



22 ամեայ Քուրնիքովա, որ առաւել ծանօթ է իր տեսքով քան՝ խաղարկութեամբ, ցարդ ոչ մէկ մրցաշարքի տիտղոսին տիրացած է: Աւելին. ան 2003 տարեշրջանին միայն մէկ մրցում յաղթած է, եւ այդ՝ սլովաքիացի Հանրիէթա Նակիւլայի դէմ, Աւստրալիոյ բաց մրցաշարքին:

«Տակաւին կը սիրեմ թենիսը եւ կ'ուզեմ խաղալ, սակայն կոնակի քրոնիք վնասուածք ունիմ եւ չեմ կրնար յաջորդական շաբաթներ դաշտ ներկայանալ» ըսաւ Քուրնիքովա, թայլէնտցի Թամարին Թասաուկարնի հետ բարեկամական - ցուցադրական մրցումէ մը ետք, որ տեղի ունեցաւ երէկ, Թայլէնտի մէջ:

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՄԵԾ ՑՈՅՑԵՐ՝ ԻՍՐԱՅԷԼԻ ԿԱՌՈՒՅԱԾ ՊԱՏԻՆ ԴԷՄ

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ԿԱԲԵՐԱՑՈՒՄԸ ՊԻՏԻ ՍՏԱՆԱՅ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՕՐ

Պաղեստինցի վարչապետ Ահմետ Քորեյ երկվյուց լայնարարեց, որ նոր կառավարության կազմության գծով բանակցությունները արտաժեռ են եւ թէ նոր դաշինքը խորհրդարանին պիտի ներկայացուի Չորեքշաբթի օր, ապահովելու համար անոր վաերացումը:

Քորեյ, որ կը խօսէր թղթակցիներու հետ, ըսաւ որ խորհրդարանին պիտի պահանջէ վստահութեան քուէի նիստ կայացնել Չորեքշաբթի օր: Կառավարութեան կազմութիւնը ուշացնող գլխաւոր խոչընդոտը ներքին գործոց նախարարի նշանակումի հարցը լուծուած էր Ուրբաթ օր՝ ի նպաստ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատ, որուն առաջարկած թեկնածուին շուրջ համաձայնութիւն գոյացաւ:



Արաֆատ եւ Քորեյ

Քորեյ երկ հանդիպում մը ունեցած էր Ֆաթիի կեղրոնական խորհուրդին հետ, ըսաւ որ կառավարութեան մաս պիտի կազմեն 24 նախարարներ, որոնցմէ եօթն «արտակարգ» դաշինքին անդամներն են:

Իսրայէլ անմիջապէս հակադարձեց, զգուշացնելով Քորեյը, որ Արաֆատ պիտի ակնհայտէր անոր կառավարութեան ճիշդութիւնը: Վարչապետ Արիէլ Շարոնի բանբերը Ռասան Կիսին դիտել տուաւ, որ Արաֆատ անի մը բախեցաւ: Ի Մայիսն ի վեր, ամեն մանրամասնութիւններ չփոխանցուեցան:

գերու մասնակցեցան Այսրյորդանանի պանապան քաղաքներու եւ գիւղերու մէջ բողոքելու համար Իսրայէլի կառուցած պատին դէմ:

Իսրայէլեան Պատը մերժող ցոյց մըն ալ տեղի ունեցաւ Հոնմի մէջ, ուր տասնեակ հազարաւոր ցուցարարներ քայլեցին Իտալիոյ մայրաքաղաքին մէջ՝ պահանջելով կասեցումը պատին կառուցման:

Քորեյը նախկին վարչապետ Շիմոն Փերէս յայտնեց, որ հրէական պետութիւնը պատրաստ է ձայնաչում տալու պաղեստինեան պետութեան մը: Ան դիտել տուաւ, որ հասած են այնպիսի հանգրուան մը, ուր պետութեան մը գծով համաձայնութիւնը անփոխարինելի լուծում մըն է:

(ԱՖՓ)


ՄԻՆՉ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՓՈԽ ՆԱԽԱՐԱՐԸ ՊԱՂՏՍՏ Կ'ԱՅՅԵԼԷ

ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐՈՒՆ ԴԷՄ ՅԱՐԶԱԿՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՍԱՍՏԿԱՆԱՆ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց փոխ նախարար Ռիչըրտ Արմիթէճ, որ Իրաք կ'այցելէ, ըսաւ, որ Ուաշինկթըն «սթափած է» դաշնակից ուժերուն դէմ յարձակումներէն՝ Իրաքի կարգ մը շրջաններու մէջ, որոնք «պատերազմի գոտի» դարձած են: Մինչ Արմիթէճ կը խօսէր Շաբաթ օր, ամերիկացի երկու պիւնտրներ կը սպաննուէին Իրաքի մէջ:

Արմիթէճի յայտարարութեան պուզահետ, Միջազգային Կարմիր Խաչ կազմակերպութիւնը ժամանակաւոր կերպով կը փակէր Պաղեստին եւ Պարսի զբոսայգիները, իսկ իշխող խորհուրդը կ'ողջունէր Իրաք ու չուղարկելու թուրքիոյ որոշումը:

Ստամբուլի մէջ, որ ՄԱԿ Խաչը փակեց իրենց գրասենեակները Պաղեստինի մէջ: Ուրբաթ օր ՄԱԿ փակած էր գրասենեակները, իսկ Շաբաթ օր՝ Մ. Կ. Խաչը, որուն մէջ բանբերը ըսաւ, որ փակման որոշումը տրուեցաւ, որովհետեւ պիւնտրական պաշտօնատարներու հետ ունեցած հանդիպումներէն ետք, Արմիթէճ հաւատուեց որ հաստատ ծրագիր մը մշակուած է հակակշիռի տակ առնելու ըմբոստ ուժերը, որոնք ամերիկացիներու իրաքցիներ կը սպաննեն: Ան աւելցուց, որ Իրաքի մէջ պատերազմական գործողութիւնները տակաւին չեն աւար-



Արմիթէճ

գոտի է»: Նախագահ Գորթ Չոլ Մայիս 1ին յայտարարած էր, որ Իրաքի մէջ պատերազմական գործողութիւնները արտաժեռ են:

Յարձակումներուն սաստկացումը պատճառ դարձաւ, որ ՄԱԿ Խաչը փակեց իրենց գրասենեակները Պաղեստինի մէջ: Ուրբաթ օր ՄԱԿ փակած էր գրասենեակները, իսկ Պարսի մէջ յարձակումի ենթարկուեցան: Գաղտնիքի ռիսկով Պաղեստինի մէջ, սակայն պոհեր չարձակուեցան:

Գաղտնիքի ռիսկով Պաղեստինի մէջ յարձակումները շարունակուեցան երկէկայ: Պաղեստինի մէջ սպանուեցաւ ամերիկացի պիւնտր մը, իսկ Պարսի մէջ յարձակումի ենթարկուեցան բրիտանացի պիւնտրներ: Բրիտանացի պիւնտրներ փոխադրող ճիֆի մը դէմ ռումբ մը նետուեցաւ: Փոխադրականը իրոյ ճարակ դարձաւ, սակայն պիւնտրները փրկուեցան:

Միւս կողմէ, ամերիկեան ուժերը ձերբակալեցին 18 կասկածելիներ, որոնք ենթադրաբար առնչակից են Պաղեստինի «Ռաշիտ» պանդակին դէմ անցեալ ամսուան յարձակումին: Չերքակայնուածներուն մասին

տեղ սակայն որ իրաքեան նոր վարչակարգը պէտք է հաստատուի:

ՍՍՏՍՍԻ ԸՆԵՏԵՈՐԴՆԵՐՈՒ ԴԷՄ ԿՐԻՃԱՌՈՒ ԱՐԱՐՔՆԵՐ

Պարսի պաշտօնութեան ուժերուն պատասխանատուն յայտարարեց, որ Սատանա չի ստանալ իր անհրաժեշտ մըն հետեւորդներ «ահաբեկուած» են, երբ կը փորձէին վերականգնել իրենց շարքերը յարձակումներ գործելու համար դաշնակից ուժերուն դէմ:

Գնդապետ Մոհամէտ Քալէմ ըսաւ, որ անցնող քանի մը շաբաթներուն ընթացքին քաղաքական բնոյթ ունեցող տասնեակ մը սպանութիւններ տեղի ունեցած են Պարսի մէջ: Ըստ Քալէմի, Սատանա վարչապետական պատկանող պաշտօնատարներ ու պաշտօնակիրներ պատասխանատուներ «մաքրագործումի» կ'ենթարկուին: Քալէմ թէ չըսաւ, թէ ո՞վ է պատասխանատուն, բայց Եսայի պէս Պարսի բնակիչները կ'ըսեն, թէ քաղաքին քաղաքական 20-30 կուսակցութիւնները ձեռնարկած են «վրիժառու սպանութիւններ»:

Քորեյը նախկին վարչապետ Շիմոն Փերէս յայտնեց, որ հրէական պետութիւնը պատրաստ է ձայնաչում տալու պաղեստինեան պետութեան մը: Ան դիտել տուաւ, որ հասած են այնպիսի հանգրուան մը, ուր պետութեան մը գծով համաձայնութիւնը անփոխարինելի լուծում մըն է:

Քորեյը նախկին վարչապետ Շիմոն Փերէս յայտնեց, որ հրէական պետութիւնը պատրաստ է ձայնաչում տալու պաղեստինեան պետութեան մը: Ան դիտել տուաւ, որ հասած են այնպիսի հանգրուան մը, ուր պետութեան մը գծով համաձայնութիւնը անփոխարինելի լուծում մըն է:

(ԱՖՓ)

ԻՆՉ

ԿԸ ԳՐԵՆ...

Շարունակուած Յոր ԷջԵԸ

«Անուար» գրած է, թէ մինչ Իսրայէլ կ'ողջունէ ժողովրդավարութեան վերաբերող Պուշի արտախաչութիւնները, արաք ընտանիքը վայն կասկածի տակ կ'առնէ:

Թերթին համաձայն, Փութին Պապի հետ տեսակցելէ ետք Ֆրանսայի մէջ հանդիպում ունեցաւ նախագահ Շիրաքի հետ: «Նահար» գրած է, թէ Ուաշինկթըն յայտարարեց, որ ահաբեկչական գործողութիւն մը տեղի պիտի ունենայ Սեդուսական Արաբիոյ մէջ եւ փակեց իր դեսպանատունը:

(ԱՖՓ)

ԹՐԲԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ԿԸ ՄԵԿՆԱԲԱՆԷ ԻՐԱՔ ՈՒԺ ՉՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԱՆԳԱՐԱՅԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆԳԱՐԱ, 9 (ԱՖՓ).- Իրաք ուժ չըրկելու թուրքիոյ որոշումը կը նշանակէ, թէ «իր ըսելիքը» կորսնցուցած է այդ երկրին վերականգնման մէջ, ըսած է թրքական բանակի ընդհանուր հրամանատար Վորապար Հիւսի Էօպրըք՝ ապառական «Ռատիքալ» օրաթերթին մէջ Կիրակի օր լոյս տեսած հարցազրոյցի մը մէջ:

Թուրքիա Ուրբաթ օր յետս կոչած էր Իրաք ուժ չըրկելու որոշումը, որ Հոկտեմբերի սկիզբը վաերացուած էր խորհրդարանին կողմէ:

Մ. Նահանգներ չէին կրցած յաղթահարել իրաքեան ղեկավարութեան եւ իրաքցի քիւրտերու կողմէ թրքական ուժերուն հաստատման դէմ ընդդիմութիւնը:

Էօպրըք յայտնած է, որ Իրաքի բաժանման գծով թրքական մտավախութիւնները ի պօրու կը մնան, շեշտելով, որ այդ պարագային քառաւոր վիճակ մը կրնայ տիրել: «Եթէ Իրաքը բաժնուի, բացի երկրին հիւսիսէն, միւս բաժինները գլխաւորաբար շիւ պիտի ըլլան: Ասիկա թափ պիտի տայ շրջանին մէջ կարգ մը երկիրներու ազդեցութեան եւ անոնց ախորժակները պիտի սրէ», բացատրած է ան:

Իրաքի մէջ համայնքային հաւանական բախումներ կրնան անսխալաբար ղեկավարելու դուռ բանալ, ըսած է Վորապարը, աւելցնելով, որ բանակը «պէտք է պատրաստութիւններ տեսնէ հակադարձելու համար նման դէպքերու եւ մենք առիկ կ'ընենք»: Ան զգուշացուցած է նաեւ, որ Իրաքի մէջ թափ ստացող անկայունութիւնը կրնայ ուղղակի ազդեցութիւն ունենալ Թուրքիոյ վրայ:

Անգարա 1997ին ի վեր պիւնտրական ներկայութիւն է Հիւսիսային Իրաքի մէջ: Չօրավարը յայտնած է, թէ թուրք պիւնտրները հոն պիտի մնան նկատի ունենալով, որ ՔԱԿ տակաւին սպառնալիք է: ՔԱԿի 5000 պիւնտրներ Հիւսիսային Իրաք ապաստանած են: Ըստ Էօպրըքի, այդ շրջանին մէջ թուրք պիւնտրներու թիւը շուրջ 1500 է:

ՍՈՒՐԻՈՅ ԿԱՐԶԱՊԵՏԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԻՐ ԵՐԿՐԻՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Սուրիոյ վարչապետ Մոհամէտ Նաժի Օթարի շաբաթավերջին Մ. Նահանգները կը դատապարտէ հակասական քայլերու դիմելու յանցանքով, նշելով, որ անոնք մէկ կողմէ Դամասկոսի մէջ նոր դեսպան մը կը նշանակեն, միւս կողմէ Քոնկրէտը կը քննարկէ իր երկրին դէմ պատժամիջոցներ հաստատելու հարցը:

Հոկտեմբեր 15ին, ամերիկեան Ներկայացուցիչներու Տունը վաերացուցած էր Սուրիան հաշուետուութեան կանչելու օրինագիծը, որ տնտեսական եւ դիւանագիտական պատժամիջոցներ կը նախատեսէ Դամասկոսի դէմ, զոր Ուաշինկթըն կ'ամբաստանէ «ահաբեկչութիւն» հովանաւորելու յանցանքով:

Մինչ այդ, Հինգշաբթի օր, Տերակոյտի Արտաքին Յարաբերութեան Զանձախումբը հաւանութիւն տուած է Մարկրէթ Սքոպիի Սուրիոյ մէջ Ուաշինկթընի դեսպան նշանակումին, որ տակաւին պէտք է վաերացուի Տերակոյտին կողմէ:

(ԱՖՓ)

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՎԱՐԶԱՊԵՏԸ ՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԷՋ ԿԸ ՔՆՆԱՐԿԷ ԻՐԱՔԻ ԿԱՊՈՒԱԾ ՀԱՐՑԵՐ

ԱՄՄԱՆ, 9 (ԱՖՓ).- Լեհաստանի վարչապետ Լեսէք Միլըր Կիրակի օր Յորդանան հասաւ ու տեսակցութիւն մը ունեցաւ վարչապետ Ֆայսալ Ֆայսալի հետ: Հանդիպումին աւարտին, լեհ վարչապետը ըսաւ, որ յորդանանցի պաշտօնակիցին հետ քննարկած է Իրաքի իրավիճակն ու վարչապետ – Ամման երկկողմանի գործակցութեան կարելիութիւնները:

Միլըր ձեռնարկած է շրջանային շրջապատյութի մը, որուն ընթացքին պիտի այցելէ Իրաք եւ Քուէյթ: Շաբաթ օր, ան Պէյրութ այցելած էր: Երեքշաբթի օր (վաղը), պիտի այցելէ Իրաք գտնուող լեհ պիւնտրներուն: